ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի ԵՎ 26-Ի՝ ՀԵՌԱԿԱ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **«26» հունվարի 2024 թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 19-րդ կետը, և Խորհրդի նախագահի 2024 թվականի հունվարի 22-ի № 1-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի Խորհրդի հերթական նիստը որոշվել է անցկացնել հեռակա էլեկտրոնային քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2024 թվականի հունվարի 25-ին և ավարտվել հունվարի 26-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Խորհրդի անդամներ՝

Ա. Դանիելյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ

Լ. Բալյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Վ. Սիրունյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ա. Բախշյան - «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ա. Հակոբյան - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ռ. Գևորգյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Մ. Թադևոսյան - «Մասնակցային դպրոց» կրթական ծրագրի հիմնադրամի անդամ

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան հաշվետվության նախագծին հավանություն տալու մասին:
2. Տեսչական մարմնի 2023 թվականի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը հաստատելու մասին:
3. Տեսչական մարմնի 2023 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը հաստատելու մասին:
4. Տեսչական մարմնի 2023 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը հաստատելու մասին:

Օրակարգային հարցերի քվեարկության վերաբերյալ անհրաժեշտ նյութերն ուղարկվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացել է:

Քվեարկության արդյունքում՝

1. Ժ. Անդրեասյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
2. Ա. Դանիելյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
3. Լ. Բալյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
4. Վ. Սիրունյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
5. Բ. Փափազյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
6. Ա. Հակոբյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկել է «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 6 «կողմ»:
Հարց 2-րդ՝ 6 «կողմ»:
Հարց 3-րդ՝ 6 «կողմ»:
Հարց 4-րդ՝ 6 «կողմ»:

Այսպիսով, Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկության նիստին մասնակցած 7 անդամներից 6-ը օրակարգի 1-ի, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկել են «կողմ»:

Խորհրդի անդամ **Ա. Բախշյանը** օրակարգի 1-ի, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերի քվեարկությանը չի մասնակցել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան հաշվետվությանը:
2. Հաստատել Տեսչական մարմնի 2023 թվականի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:
3. Հաստատել Տեսչական մարմնի 2023 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:
4. Հաստատել Տեսչական մարմնի 2023 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

Recoverable Signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Խորհրդի նախագահ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

_____ **Ժ. Անդրեասյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն